

Ա Պ Մ Ե Լ

Անդորրութեան մէջ, վայելքի գրկում,  
Անցընել կեանքը ազատ, անարգել,  
Ու փառքի աստղը ժպտայ երկնքում...  
Օ՛, այդ չէ ապրել...

Վառ բնութեան մէջ գարնան ծաղկաբոյր,  
Ուր վտակի հետ հոսում է ջինջ սէր.  
Բոց այտից քաղել հեշտանքի համբոյր...  
Օ՛, այդ չէ ապրել...

Մնալ շղթայուած ոսկիէ կուռքին  
Գետնաքարշ ընկած երկինքն անարգել.  
Ու մահուան առջև սարսուալ ոյժգին...  
Օ՛, այդ չէ ապրել...

Կամ կենալ միշտ հեզ, համեստութեան մէջ-  
Ճակտից քրտինքի կաթիլներ թափել—  
Սարուկի քրտինք, անվերջ ու անվերջ...  
Օ՛, այդ չէ ապրել...

Բարձր, ժխորից այս կեանքին ցամաք.  
Դէպ կատարները վեհ իդէալների.  
Մաքառել, քայլել...

Ու այրուել կրծքիդ յոյզերովն համակ...  
Ահ, այդ է ապրել...

1902 թ.

Հը. Ֆալեան